

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԿԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու բիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար
Վեցամսեայ 1.50 "
ԿԱՆԽԻԿ

Ծանոթանալ տողը
20 ամսեայ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՁՈՐՆՅՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

"Iravounk"

VARNA (Bulgarie)

1902 Редакция

НА ВѢСТНИКЪ

"Иравункъ"

ВАРНА (България)

Գրողները եւս
չեն տրուիր

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՆՊՍՍՏ

ՏԱՀԱՆԱԿԱՆ ԴԱՂՔԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Ստորեւ կը հրատարակենք այն կարեւոր յօդուածը զոր Բարիդի Օնոր թերթին մէջ հրատարակած է Գրանտի Տը Բուսանտէ, ընկերակարական երեսփոխան, տնօրէն թանկ քաղաքական բաժնին, անգամ Բրո Արմէնիայի խմբագրութեան ու հայաստանեան Միայնութեան ծանօթագրութիւնը:

Ինչպէս պիտի տեսնուի այս սրտախոր յօդուածին ընթերցումէն, անստոյգ ապագայի մը մատնուած մեր տարաբախտ գաղթականներուն վիճակը նոյն իսկ կը յուզէ օտարները, որոնք անոնց անմիջական օգնութեան մը փութալու համար, հանգանակութեանց ձեռնարկելու հրաւերներ կընեն. հարկ չկայ ըսելու թէ մեր հայերու պարտականութիւնը որքան աւելի անհրաժեշտ կըլլայ բարձրօրէն հայրենասիրական այս ձեռնարկին մասնակցելու: Մեր անցեալ թիւերէ մէկուն մէջ, տաճ. կահայ գաղթականներու վիճակին մէկ սրտաշարժ նկարագրութիւնը ներկայացնելով, հրաւեր կը կարգայինք ընդհանուր հանգանակութեան մը ձեռնարկելու անմիջական անհրաժեշտութեան, զոր նախապէս Բաղդադի յղացքը էր. մեր այդ տողերը արձագանք գտեր են «քսնարայ»ի մէջ աշխատող հայ բանուորներու ըով, հազիւ իրենց տնօրէնայ ապրուստը ճարող անհատներ: Որոնք սակայն յուզուելով ամենայն թշուառութեան մատնուած ու ստոյգ փճացումի մը դատապարտուած մեր Տաճկահայ գաղթականներու վիճակին նկարագրութեան, անմիջապէս հանգանակութեան մը ձեռնարկելով, երկու պատուիրակներու միջնորդութեամբ արդիւնքը խմբագրութեան տրամագրութեանը ներքեւ կուզէին դնել. դժբախտապէս մենք հարկադրուեցանք իրենաբախ հայրենասիրութեան արդիւնք այդ հանգանակուած գուժարը մերժել. վասն զի համազգ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի մէկ բարձրագոյն բաժնեկալը, որ կը դառնայ թագուծ մնալ, ինծի ուղարկած է 5,000 Ֆր.ի գումար մը, զոր կը սահմանէ իր տարաբախտ հայրենակիցներուն մէկ մասը նպաստաւորող ձեռնարկի մը: Սնունք որ կը հետեւին Սպարի Համիտի կամքին լքուած այս դժբախտ երկրի գործերուն, զիտեն թէ ամբողջ գաւառի մը բնակչութիւնը, քիւրտերու, համիտիներու և նոյնիսկ թուրքերու ամէն կարգի զրգուծութիւններէն ու ճիրներէն համբուրութիւնը կորուսած, ու էնթարկուած դահիճի մը հալածանքներուն՝ որը իր զոհերուն վրայ հասուցած չարիքը չի ներեր, որոշեց իր բնակավայրը թողուլ ու ապաստանարան փնտռել աւելի հիւրընկալ երկրի մը մէջ:

Սրտի խնդութեամբ չէ որ այդ գիւղացիները, որոնք իրենց բոլոր էութեամբը կապուած կը մնային հողի մը, ուր ծնած են, ուր ճանչցած ու ճաշակած են մարդկային կեանքի ուրախութիւններն ու տառապանքները, ուր դրած են իրենց զաւակներուն օրորոցը՝ ծնողներ նուն գերեզմանին վրայ, կարող են տապալել ընտանեկան վառարանին ու երթալ հեռունները միշտ անստոյգ ու մերթ անագորոյն աքսորանքի մը փորձութեանը ենթարկուելու: Պէտք եղաւ որ, պետութեանց միաբանութեան ոգորմելի վիժումէն ետքը, արեւմտեան խղճմանքի այս ահալ լուծեան հանգէպ, միշտ արթուն բռնակալութեան մը գանգաղ ու անգութ գործունէութիւնը այդ գիւղացիները յուսահատութեան մէջ ձգէր:

Ան քաջամարտ մարդիկ, որոնք հայրական կոտորածներու առջեւ յուզուած ու գուժ զգացած էին, ու կերեւակայէին թէ, վասն զի արիւնը ալ յորդառատ չթափիր, կոտորածները մեծ համեմատութիւններ ալ չեն առներ, ու ամբողջ ազգի մը հեծեծանքներուն արձագանքը, մառուի կողմէ ալ հարկաւորապատկուած, իրենց չհասնիր, ու ամէն բան ալ թուրքերի

մէջ լաւագոյն ընթացքի մը կը հետեւի, աղէկ պիտի ընէին ուշագրութիւն նուիրել ժողովուրդի մը այս գաղթականութեան: Երբ ժամակակից Դիւանագիտութեան պատմութիւնը գրեն, անոր գլուխներուն ամենէն պանծալին պիտի չըլլայ այն գլուխը, ուր պիտի պատմուի այս գաղթականութեան հանգէպ պետութեանց տարօրինակ անդամալուծութիւնը, ու այն ամօթապարտ փութկոտութիւնը որոնցմէ ոմանք ունեցան մարդկութեան հանգէպ իրենց պարտաւորութիւնները մատնելու, նոյնիսկ իրենց յանձն առած իրաւունքներէն կապտուելու, որպէս զի իրարմէ խլեն արիւնարբու բռնակալի մը կասկածելի շնորհները ու անստոյգ ստացուածները:

Նոյնիսկ անոնցմէ անոնք, որոնք Յրանալի պէս՝ տառապեալ Հայաստանի խնդիրը չեն լքած ու ինչպստ իրենց պաշտպանեալին Պոլսոյ մէջ ձայներնին մերթ լսելի կընեն, դժբախտապէս «օրինական» գործունէութեան շրջանակը թողած են: Սէն անգամուն որ զոհերու աղաղակը շատ զօրաւոր հնչէր ու չափազանց գալթակալից ոճրի մը վրայ լոյսի ճառագայթ մը իյնար, զոհացանք մարդասիրութեան անունով խօսելու, ու պահանջելու դարձան մը, որ միշտ անբաւական ու յաճախ շինծու էր:

Պէտք եղածը այն էր որ, անգաղար Սուլթանը հրաւիրէին որպէս զի կատարէր այն պարտաւորութիւնները, որոնց վրայ Պէրլինի վեհաժողովէն ի վեր անոր միջազգային գոյութիւնը կը հանգչի, և մանաւանդ վերջապէս գործադրէր — Մակեդոնիոյ կամ կայսրութեան միւս մասերուն համար առանց ունեւնութեան — 1878ի դաշնագրի 61րդ յօդուածը: Միանգամայն քաղաքական թէ բարոյական ու մարդկային պիտի ըլլար. եթէ Ֆրանսական նաւաբաժինը միայն արեւելքի շիւ շահագէտներու օգտին Միտիլէնի նաւակայքին մէջ չմնալով, իր թնդանութիւնը Մեծ Թուրքիին վրայ ուղղէր. ոչ թէ Թիւրքիին եւ Հօրանտոններու բաւարական ըլլալու համար, ալ նաեւ որպէս զի ծառայէր քաղաքակիրթ

ին այս գերազանց ձեռնարկին յաջողութեան տեսակէտով այսպիսի գործերու մէջ մեր մասնակցութիւնը ֆիասակար կը դատենք, քանի որ, ինչպէս Որբախնամի առթիւ կըսէինք, տակաւին մեր մէջը շատ ու շատ են այն կարգի անհատներ, որոնք մեզի սկզբունքի կամ ունեւնութեան մը համար հակառակորդ ըլլալով, յամառաբար պիտի մերժէին մասնակցել այնպիսի ձեռնարկի մը, ուր իրենց չհանդուրժած անուններու գործակցութիւնը պիտի նշարէին:

Ուրախ ենք սակայն ըսելու թէ ուրիշներ գաղթականներու ինչպստ անմիջական հանգանակութեան մը ձեռնարկելու համար արդէն իսկ քաղաքիս հանրածանօթ անձնաւորութիւններէն բաղկացած Յանձնախումբ մը կազմուելու վրայ են: Վառնայի ծանօթ վաճառականներէն շատեր համակերպելով իրենց եղած կրկնակի խնդրանքներու, հաճութիւն տուած են հայրենասիրական այս ձեռնարկին մասնակցելու: Իսկ նուիրատուներու անունները հետզհետէ տեղական թերթերու մէջ կը հրատարակուին:

Ուրախ ենք որ այսօր պիտի կրնանք հրատարակել նուիրատուներու հետեւեալ աւալին ցանկը:

Խմբ. Իրաւունքի	5 Ֆր.
Տիգրան Էլմասեան	2 "
Պետրոս Քիւրքեան	1 "
Մ. Սէրէնեան	1 "
Մ. Շիրինեան	1 "
Ս. Կոչկարենց	2 "

Կը յուսանք թէ վառնայէ զատ Պուլկարահայ ուրիշ գաղթական նութիւններ ալ պիտի չուզեն զլաւնալ իրենց լուծանքը՝ թշուառութեան փճանալու դատապարտուած իրենց Տաճկահայ եղբայրներու ինչպստ այս ձեռնարկին յաջողութեան:

Տ. ԷԼՄԱՍԵԱՆ

Ա. Չ. Դ.

Տոմարակալութեան ու Ֆրանսերէն ու Անգլիերէն լեզուներու հմուտ անձ մը Պուլկարիոյ կամ Ռուսիոյ մէջ վաճառատան մը մէջ պաշտօն կը փըտը: Դիմել խմբագրութեանս:

աշխարհի ու Եւրոպայի հանրային իրաւունքի բռնի պահանջումները տանելու :

Հարկ չտեսան ալսպէս ընելու . կը ցաւիմ . Պէտք է գոնէ որ այս պահուս , ու քանի որ Դաշնագիրներու անունով խօսելու կարող ան . ձերը յօտարակալ մարդասիրութեան աւելի նեղ և նուազ տվուր հողին վրայ մնացիմ , խնդրոյն Պին . չեւ ծայրը երթան : Ու որպէս զի պատեհութիւնը ընծայեմ Մ . Տէլ . քառէի որ դիւանագիտութեան Հա . յերու նկատմամբ ունեցած պարտքին վրայ թերհաշիւ մը ընէ , պատիւ ունեցայ ընդունած գրամներս անոր տալէ առաջ , հետեւեալ նա . մակը անոր ուղղելու :

ԲԱՐԻՁ , 12 Նոյեմբեր 1902

Պարոն նախարար ու սիրելի Պաշտօնակից

Ձեզի հետ ունեցած խօսակցութեանցս մէջ , մէկէ աւելի անգամներ , իմ ուրիշ պաշտօնակիցներուս հետ համախորհուրդ , ձեր ուշադրութիւնը հրաւիրեցի այն ողբալի կացութեան մասին , որուն Հայերը ենթարկուած կը մնան . կը կարծուէի թէ , հակառակ Պերլինի դաշնագրին գործադրութեանը մասին՝ պետութեանց միաբանութեան տխուր վիժումին , այս ժողովուրդին մարտիրոսութեան միակ նկատումը պիտի բաւէր , կայսրութեան մէջ անոր ապահովել , եթէ ոչ առանց օրինական երաշխաւորութեանց անկարելի անգործութիւն մը , գոնէ առժամեայ մեղմացում մը :

Պարոն նախարար , դուք ինձմէ աղէկ գիտէք թէ խնդիրը այնպէս չէ եղած . Ֆրանսան , ու անոր հետ ուրիշ պետութիւններ , որոնք ճշգրիտ չահերու համար իրենց իրաւունքներէն չեն կապտուած , կարելի եղածին չափ չարիքին դարման տանելու համար դիմումներ ըրին : Պետութեանց այս դիմումները որքան գովելի ալ ըլլան , արդիւնք չունեցան անոնք . այս ժողովուրդներու ողբալի կացութիւնը միշտ կը գէշնայ . ամենամեծ ահահաստութիւններու ենթարկուած են կարգ մը նահանգներ՝ ուր քրտները , համիտիները ու նոյնիսկ կանոնաւոր բանակները մարդերու կեանքին , կանանց պատուին կը սպառնան :

Այս պահուս , կազմակերպուած բարբարոսութեան զոհերէն քանի մը հազար հոգի կը ջանան խոյս տալ անտանելի վիճակէ մը , ձգելով իրենց բնակավայրը : Չանագան պատճառներով , Ռուսիան այս հիւրերը ընդունելու տրամադիր չէ :

Հայկական խնդրոյն անձնուէր մարդիկ խորհեցան թէ գոցէ այս խեղճերը Պարսկաստան պտնեն տարրական ապահովութիւն մը . խնդիրը այս գաղթականութիւնը դիւրացնելու վրայ է , կը կարծեմ , Պ . Նախարար թէ , դուք տրամա .

դիշ պիտի ըլլաք Եւրոպայի մօտ ձեր բարեացակամ յանձնարարութեան օժանդակութիւնը նուիրելու : Հայաստանի մէկ վեհանձն բարեկամը հաճած է այս ծրագրին՝ համակրանքի ազգու ապացոյց մը տալ . ան ինձ յանձնել տուաւ 5000 Քր . զումար մը՝ ինձ յանձնարարելով որ ձեզի հարցնեմ թէ պատշաճ չէ՞ք դատել այս գումարը ձեր գործակալներուն ուղարկել , որպէս զի գաղթականութեան օգնէին :

Այն պարագային , երբ հաւանք մարդասիրական այս պաշտօնը կատարել , տարակոյս չունիմ թէ յիշեալ անանուն նուիրատուին օրինակը հետեւողներ պիտի ունենար ու նոր հանգանակութիւններ եւրոպական դիւանագիտութեան անկարողութեան այս զոհերուն՝ Արեւմտեան թաքնապաշտութիւնը պիտի յայտնէին :

Ֆ . Տը Բոնեսանս

Ինչպէս Մ . Տէլքառէի ըսած եմ , ինձ անկարելի կը թուի որ հանրապետական կառավարութիւնը մերժէ կատարել մարդային այս պաշտօնը , որուն անպատեհութիւններն , նոյն իսկ դիւանագիտական , տեսնելու կարող չեմ : Ու եթէ պատահաբար , յոյսս մէջ խառնէի , այն ատեն պիտի ջանամ անանուն նուիրատուին փափաքին համաձայն , Հայաստանի ինչպատ այս գումարը լաւագոյն կերպով գործածել , ու կը յուսամ կարծել թէ , Օտտոի ընթերցողները ու բոլոր անոնք , որոնք առանց կուսակցական նկատումի , նուիրական խնդրոյ մը համար համակրանք կը դաւանին , պատիւ պիտի համարեն ազատագրութեան ու փրկութեան այս ձեռնարկին գործակցել :

Ֆռանսիս Տը Բոնեսանս

(Օոթոր)

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երկսեռ Որբախնամ Ընկերութեան Ընդհանուր Ժողովը որ պիտի գումարուէր Նոյեմբեր 10ին , մեծամասնութիւն չը գոյանալով յետաձգուեցաւ , վաղը կիրակի , կէս օրէն վերջ , ժամը ճիշդ 2ին , ազգային վարժարանին մէջ գումարուելու :

Ըստ տրամադրութեան կանոնադրի Թ . Բ քաղաքին՝ ներկայ և զոյները մեծամասնութիւն պիտի կազմեն և բացակայ եղողները բողոքելու իրաւունք չը պիտի ունենան :

Մնաճ Յարգանք

Ի գիտաց ընդհ . դիւանի

Ատենադպիր Ատենապետ

Արշաւ Փաշանեան Յ . Ս . Թուպըլբեան Վառնա , 16 Նոյեմբեր

ՆԱՄԱԿ ՍՕՖԻԱՅԷ

ԽԱՄՔՕՎՈ . —

Նախորդ երկու նամակներովս Պուրկաղի և Սիլվէնի ազգային վարժարաններուն ներկայ տարեւորջանէն սկսեալ խոսեալ լինել նինցաւ ի սիրտ հաղորդած էի : Այս նամակովս ուրախ եմ հաղորդելու թէ ուրիշ գիւղաքաղաք մը , խաւքովօ՝ ուր միայն 15 տունի չափ հայ գաղթականութիւն մը կայ առանց եկեղեցիի , իր վարժարանն ունի : Այս փոքրաթիւ հայ գաղութը , կարծես իրմէ տասնապատիկ աւելի թիւ ներկայացնող Սիլվէնցին և Պուրկաղցին ամփոփելու համար , այս տարի վարժարանի յատուկ տուն մըն ալ գնած է . հոն պարկեշտակ երիտասարդի մը հակողութեան տակ 20ի չափ հրկսեռ հայ փոքրիկներ կը դաստիարակուին անձայն անշըշուկ : Խաւքովոյ փոքրաթիւ ազգայնոց դէպի իրենց մայրենի լեզուն և դէպի ազգային դաստիարակութիւնը ցոյց տուած այս գործնական նախաձեռնողութիւնը ամէն գովեստէ վեր է արդէն . միայն կը բարեմաղթենք որ իրենց այս գովելի ձեռնարկը յարատեւէ :

* * Հին-ՉԱԿՕՐԱ . — Խաւքովոյէ շատ հեռու չեղող ուրիշ քաղաք մը , Հին-ՉԱԿՕՐԱ , բնակող 8—10 տուն հայ գաղթականներն եւս իրենց զաւակները ազգային դաստիարակութենէ զուրկ չը թողնու գովելի նպատակաւ , իմացալ թէ , ի մօտոյ փոքրիկ վարժարան մը պիտի հաստատեն . արդէն նիւթական տեսակետով նախապատրաստութեանց ձեռնարկած և կոկիկ գումար մըն ալ հաւաքած են կըսուի :

Այսպէս , անշան թիւ մը կազմող ու ցանցնուած մաս մը ազգայնոց հայրենի դաստիարակութեան համար ցոյց տուած եռանդը , և ամէն բանէ առաջ իրենց զաւակները հայ կրթիւ ու հայ մեծցնելու իղձը , ազգին վշտերովը տողորուող այցելողի մը որչափ հըրճուած կը պատճառէ , նոյնչափ և ալ աւելի վիշտ և տրտմութիւն կաւեցնեն այն կարգ մը ազգայիններն որոնք , իրենց բնակած քաղաքին մէջ ազգային վարժարաններ ունենալով հանդերձ՝ հայերէն բառ մը չը հասկցող զաւակներն օտար վարժարաններ կը դրկեն , միմիայն օտարին լեզուն սովորելու համար : Այսպիսիները կը կարծեն թէ այդ կերպ վարուելով՝ իրենց զաւակները՝ ազգային վարժարան յաճախող տղաքներուն վրայ մեծ առաւելութիւններով պիտի օժտուին . մինչդեռ բազմաթիւ փորձեր հակառակ արդիւնք ցոյց տուած են : Այս մասին ի մօտոյ մասնաւոր յօդուածով մը կը խօսուի :

ՆԱՄԱԿ ՊՈՒՐԿՕՁԷ

ՊՕՔՄԷՐՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Ամիսէ մը ի վեր «Վառիթէ» կոչուած խումբը քաղքիս մէջ թատերական ներկայացումներ կուտայ :

Այս թատերախումբը բաւական համակրութիւն գտած է տեղւոյս հասարակութենէն , որովհետեւ այնպիսի տաղաններու «կենդանի պատկերներ» կը ներկայացնէ բեմին վրայ , որոնք արդի կեանքէն առնուած են ու արիւնալի յիշատակներ ունին :

Այդ արիւնալի տաղաններէն մին էր Պօքսէրներու ներկայացումը զոր այնքան յաջողապէս պատկերացուեց զիտցաւ թատերախումբը : Հասարակութիւնը բեմին վրայ տեսաւ Չինացի Պօքսէրները՝ իր բովանդակ բարձարութեանը մէջ : Ձեռ կրնար նկարագրել թէ թատերախումբին անձերն որքան ճշգրտէն կերպարանաւորուած էին : ճշմարտութեամբ տեսնուեցնելով , իրենց անխօսակ դերին մէջ ամենուս վրայ չարսուռ մը թողուցին , երբ վարագոյրը բացուեցաւ ու իրենք երևցան :

Օհ , Աստուած իմ . միթէ Չինացի Պօքսէրը թուրք Սօֆիաներու տիպը չէ՞ . հետեւաբար , «Վառիթէ» խումբը Չինացի Պօքսէրը ներկայացուեցնելով , միթէ թուրք Սօֆիան ու անոր բարբարոսութիւնը չպատկերացուներ մեր աչքին հանդէպ :

Թատերասարճ լեցունող ժողովուրդը չէ թէ Չինաստանի քաղաքներու մէջ փոխադրուած էր այդ պահուն , այլ՝ թուրք Սուլթաններու մայրաքաղաքը կը պատկերացուէր իր երեւակայութեան առջին ու յիշու կը հարկադրուէր 1898 թուականը . . . այն թուականը՝ որ թատերաբեմին վրայ ներկայացուած տրամին յափ զարհուրելի , աւագորոն ու բարբարոսական էր :

Վարագոյրները յաջողաբար ու մեղքենական արագութեամբ փոխուելով , Չինացի Պօքսէրներու անողոք դերը կը պատկերանար՝ աւելի՛ վրէժխնդրական ու ալ աւելի՛ դժոխային :

Մանաւանդ , երբ թատերաբեմին վրայ երևցաւ Գիւմանական լիազօր դեսպանը , որուն ապարանքը պաշտօնաւոր էր Պօքսէրներու լէգէոնէ մը , տեսնելու էր ժողովուրդին արդար զայրոյթը գերման ազգին դէմ , որ անտարբեր եղած էր հայկական ջարդերու ժամանակ : Շատեր , փոխանակ ցաւելու , փոխանակ մահու եւ կենաց վայրկեանի մը մէջ մաքառող եւ գերագոյն ճիգեր թափող այդ դեսպանին վրայ գթալու , չկրցան իրենց հոգւոյն ճիշդ զսպել ու բացազանչեցին : Օհ , ըլլայ . . .

Հոս , նպատակ չունենալով գովեստներ չափելու թատերախումբին մասնակցող ու անոր ոգին կազմող հայ երիտասարդներու վրայ , միայն պարտ կը համարիմ ըսելու թէ ընտրուած տրամներու լեկներուն պատկերները՝ յուզիչ ու յանկուցիչ ըրած են անոնք , որովհետեւ սիրով փարած են իրենց կատարած գործունէութեան ու դերերուն :

Այդ , սոյն քանի մը տողերը կը նուիրեմ անոնց՝ ուղղակի ներքին ձայնէս թելադրուած :

Ուրիմն յարասեւութիւն կը մաղթեմ :

Թղթակից

12 Նոյեմբեր

10 Նոյեմբեր

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

ՈՐԲԱՆՈՒՄ ԳՈՐԾԸ

Մեր ընթերցողներուն ծանուցինք արդէն թէ՝ շատ տեղերէ մեզի եղած խնդրանքներու համակերպելով, որոշած ենք գրքի ձեւով ալ առանձին հրատարակ հանել մեր թերթօնը՝ ԹԻԱՊԱՐՏԸ, ազգային լիզափոխական ժամանակակից դիպուածներէ, հետաքրքրաշարժ պատահարներէ առնուած վէպ մը, որուն ընթերցող հանրութեան կողմէ գտած ընդունելութիւնը, իրաւ մեր ակնկալութիւններն ալ գլեց գերազուցեց։ Անշուշտ, Արտասահմանի մէջ շատ հայ թերթեր, տեղային նպաստաւոր պարտգաններէ օգտուելով, մեր արդի վիճակը շոշափող վէպեր կամ պատմութիւններ հրատարակեցին. բայց, կը համարձակինք ըսելու, անոնցմէ ոչ մէկուն մէջ կը գտնենք այն վառ, յուզիչ նկարագրութիւնները, իրարու յաջողապէս շղթայուած մերթ ուղիքային, մերթ սիրային, մերթ եղբրական անակնկալներու ճոխ շարքը, որոնք մասնաւորապէս կը յատկանշեն մեր փրկագիր-աշխատակից Պ. Շիտանեանի հիշմանկութիւնը. այս յաջողութեան մէկ գլխաւոր գաղտնիքն ալ անշուշտ հոն է որ, հեղինակը իր վէպին վառապան իրադարձութեանցը մեծագոյն մասին գրեթէ ակնառեսը կամ ակնշնչուր վկան եղած է. երկար ատեն բնական ըլլալով ա.ն վարերը, այն մթնոլորտին մէջ, ուր վէպին դերակատարները կը շրջնէն, լիապէս ծանօթացած է տեղային ցեղերու ուրոյն սովորութեանցը, զանոնք բնորոշող կրօնական աւանդութեանց, կամ Հայրիւր վերաբերութեամբ անոնց յարաբերութեանց։ ԹԻԱՊԱՐՏԸի վերջին մասը տակաւին ատեն մը տեւելու է. սա. կայն, նկատողութեան առնելով այս վէպին ժողովուրդին կողմէ գտած ընդունելութիւնը, միջոցներ ձեռք առած ենք որպէսզի ԹԻԱՊԱՐՏԸի վերջաւորութենէն ետք նոր թերթօնի մ'ալ հրատարակութիւնը սկսինք, յատկապէս իրաւունքի ընթերցողներուն համար հեղինակութեամբ, ու նոյնպէս ազգային արդի պատահարներէ ներշնչուած։

ԽՄԱՅՐՈՒԹԻՒՆ

Գիրքը երկու հատորներէ բաղկանալու է, եւ արդէն մեծագոյն մասը տպագրուած ըլլալով, վերջին մասին տպագրութիւնն ալ աւարտելու մօտ է. հետեւապէս երկու հատորներն ալ մօտ օրեր հրատարակ կ'ըլլեն։

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆԸ Զ ՖՐԱՆՔ Է

Ստանալ փափաքողները այդ երկու ֆրանքը այժմէն խոլ-բագրութեամբ դիմելով, կրնան փառաք ըլլալ քէ ԹԻԱՊԱՐՏԸի կազմուած երկու հատորները քիչ ատենէն կ'ստանան։ Այս պատիկ գումարը մեզ հասցնելու դիմումներն համար կը յայտարարենք քէ փոխարէնը 10 Ե/Օ գեղով առնեն երկրի մասն. կ'աղբուր կընդունինք։

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

(31)

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԻ

ՊԱՏԻՈՒՆ-ՎԵՏԻԿԱՅԻ ԿՈՒՐԸ

- Ես ի՞նչ տեղեկութիւններ կրնամ տալ...
- Ձեր վեհափառութիւնը շատ տեղեկութիւններ կրնայ տալ մեզի, ընդհատեց Ներսէս Արծրունին։
- Ի՞նչ տեղեկութիւն...
- Ձեր վեհափառութեան թեմերու մասին կուգէինք մանրամասնօրէն տեղեկութիւններ ունենալ։ Ի հա՛րկէ. Ձեր թեմերը՝ մեծաւ մասամբ քուրտ պէկերու ձեռքն ըլլալով, ամենէ՛ն աւելի բնաջինջ դրութեան մը մէջ կը գտնուին։ Արդեօք չկան միջոցներ, որոնցմով փրկելու ջանանք զանոնք։
- Ի՞նչ գիտնամ, զաւա՛կս, Աստուծոյ կամքն է այդ։
- Աստուծոյ կամքը... ամենեւին. Աստուած ատանկ բռնութիւն մը չսիրեր։ Ատիկա մեր յանցանքն է։ Մեր թուրութիւնն է։
- Ի՞նչ կրնանք ընել։ Մեր ձեռքէն ի՞նչ կուգայ, երբոր զանակ մը անգամ չունինք։

- Իրաւունք ունիք. բայց եթէ կամք ունենանք, եթէ պատիւնիս ճանջանք ու եթէ ազգային նախանձախնդրութիւնը գիտնանք, զանակին տեղ սուր ալ կրնանք ունենալ։
- Կառավարութեան դէմ։
- Ի՞նչու կառավարութեան դէմ... մի՞թէ կառավարութիւնն է որ այդ գեղերը բնաջինջ ընելու կաշխատի, մրմնջեց Ներսէս Արծրունին գրեթէ միամիտ բացատրութեամբ մը։
- Կառավարութիւնը չէ... բայց զէնք գործածելու հրաման չունինք։
- Ի՞նչու ուրեմն մեզ կոտորողները զէնք գործածելու հրաման մը ունին։
- Ի՞նչ ըսենք... կառավարութիւնը կարգիլէ։
- Միայն Հայերու։
- Այո՛, միայն Հայերու։
- Ըսել է թէ՛ կառավարութեան թելադրութեամբ կը կատարուի, անանկ չէ՞։
- Ատիկա չգիտցուիր... թո՛թովեց վեհափառը՝ գրեթէ երկիւղայի վերապահութեամբ մը։
- Ինչպէ՞ս չգիտցուիր... չէ՞ որ քուրտը զէնքով կը կոտորէ հայ ժողովուրդը եւ կառավարութիւնը միշտ աչք կը գոցէ. չէ՞ որ մեր քովը զանակ մը անգամ չուզեր ըլլալ, իսկ վայրենի ցեղի մը ձեռքը Մօսիին հրացանը կը գտնուի, ըսել է թէ յայտնապէս ծրագիր մը պատրաստուած է՝ մեզ բնաջինջ ընելու համար։ Ասիկայ առարկութիւն կը վերցունէ՞, վեհափառ, ըսէ՛ք մեզի, կը խնդրեմ։
- Խաչատուր Կաթողիկոսը չկրցաւ պատասխանել։ Այնքան ճշմարիտ էր Ներսէս Արծրունիի առարկութիւնն որ կը խղզէր զինքը եւ կը խոցոտէր իր սիրտը։

- Ձեր վեհափառութիւնը շատ բան կարող է ընել, յարեց Ներսէս Արծրունին իր խռովայն ձայնը մեղմացնելով։ Գիտենք թէ Ձեր գիրքը, Ձեր պաշտօնը, մանաւանդ Ձեր ազդեցութիւնը մեծ կշիռ ունի թէ՛ կուսակալին քով եւ թէ՛ Բ. Դուռը։ Պէ՛տք է որ չլռէք։ Ներկայ հանգամանքներու մէջ Ձեր լուրջութիւնը՝ հաւասար է ա՛յն մեղաւորութեան գործ...
- Ի՛նչ, Ներսէս Արծրունին իր խօսքը չկրցաւ աւարտել... կարծես թէ հոգեկան փղձկում մը խղզեց զինքը։
- Ա՛խ, գիտե՛մ... գիտե՛մ թէ կը դատապարտէք զիս, կը մեղադրէք՝ իմ քաջուած ընթացքս տեսնելով, ընդհատեց վեհափառը. Բայց ի՞նչ ընեմ... անա՛ղ զեռ ամիս մը չկայ որ «Շատխա-Վետիկ» կոչուած կիրճին մէջ դէպք մը պատահած է, եւ այդ պատճառաւ թեմերուս բոլոր գեղացիները կրակ ինկեր կը վառուին կառավարութեան ձեռքը։
- Ի՞նչ դէպք է պատահած, հարցուց Ներսէս Արծրունին։
- Մոկաց Շէյխը յարձակում կրեւ է Հայերէն... քուրտ մըն ալ սպաննուեր է այդ կողմին մէջ... պատասխանեց վեհափառը։
- Պատճառը...
- Պատճառ մը չկայ եղեր։
- Կառավարութիւնն այդպէ՛ս կըսէ։
- Այո՛։

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Աֆիոն-Գարահիսարի հրկիզեալ-ներուն ի նպաստ, ծանօթ վաճառական Միքայել Յակոբեան 20 ոսկի գումար մը Պատրիարքին յանձնած է:

— Վառնայի ծանօթ վաճառականներէն Տ. Ն. Քէստանեան յանձն առած է Տոճկահայ գաղթական-ներու ի նպաստ քաղքիս մէջ ձեռնարկուելիք հանգանակութեան ցանձնախուժին մասնակցիլ:

— Բարիզի հայկական եկեղեցւոյ Հոգաբարձութեան Ատենայետ Պ. Էֆնայեան կառուցուող եկեղեցւոյն համար կալուածի մը յատկադիծը պատրաստել տուեր է, զոր իր անձնականէն պիտի շինէ, 100,000 ֆրանք ծախսելով: Գանձապետ Պ. Զօրայեան ալ մտադիր է մի քանի բարեկերպութեան գործակցութեամբ ուրիշ կալուած մը շինել:

Էֆնայեանի շինելիք կալուածը պիտի բերէ տարեկան 7,500 ֆր. և Զօրայեանինը՝ 5,000 ֆրանք, ընդամենը 12,500 ֆրանք, եկեղեցւոյ տարեկան ծախքը զէթ մասամբ ապահովելու համար:

— Պողոս Նուպար բաշա Բարիզէ եգիպտոս վերադարձած է:

— Արմաշի Դպրեմանքին 600 ոսկի կտակող Տիկին Վասիլուհի Մարկոսեան, որ Երուսաղէմէն Ամիրայ Նէվրուզեանի դուստրն է, Երուսաղէմի վանքին համար ալ կարեւոր գումար մը նուիրելու վրայ է: Արմաշի Դպրեմանքին նուիրուած կտակին գործադրութեանը համար խնամակալ Մարմին մը կազմուել է որուն կանգնակցին Տիգրան Երուսաղէմեան, ատենապետ քաղաքական ժողովոյ, Սահակ Ղազարեան ու Տիգրան Բարազամեան:

— Եգիպտոսէ առնուած տեղեկութեան մը համաձայն Աբրահամ Բարդոյ պէյ, Աղէքսանդրիոյ թաղ. խորհրդոյ գերատեսչութեամբ, բաշայութեան աստիճանին բարձրացած է:

— Եղանակի ցրտութեան պատճառաւ, կարինի եկեղեցական ու դպրոցական շէնքերու վերանորոգութեան գործը առաջիկայ ամսան յետաձգուած է. բայց տեղւոյն Առաջնորդը, Չախն վարդապետ միջոցներ ձեռք առել է, որպէս զի ազգային վարժարանի դասաւանդութիւնները շարունակել կարելի ըլլայ:

ԲԱՏԱՆԱՅԻՆ ԿՈՒՂԱՌԻՆ

Սիւստրէի եկեղեցիին քահանան Տ. Տաճատ մեկնած ըլլալով, Սիւստրէի եկեղեցիին համար քահանայի մը պէտքը կայ: Դիմել տեղւոյն թաղ. խորհրդին:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Իգտածըն վերտիյի մալիւմաթա նազարէն, Շամ-Աբեա շրմէնտըֆէր խաթիթը միւլապետա ոլընուլ Հիճազ խաթիթը պիւլէշտիթիւ մէսի խուսըսիւտա. ոլ խաթիթը սահիպը իմթիյազո օլան Մ. Բիւնկի վէ թիւրք հիւքիւմէթի պէյնիտէ ճարի օլան մուհալէրէ խիթամ պուլմըշ օլուպ, մէղքիւր գում. բանիւնըն Սթամպուլ վէքիլի Մ. Բամիզէ թարաֆընտան մարիւզ-զիքը (վերոյիշեալ) խաթիթըն 150,000 լիրա մուգապիլիտէ ֆիլոսոֆի (ծախի) հոգաբնտա գալէմէ ալընմըշ օլտըղը շարթիւտէի նաֆաա նազըրը Զիհնի բաշա իմ. զալմըշ:

— Սթամպուլ կօզէթ օլտըն վերտիյի մալիւմաթա կէօրէ, շուրայի տէօվէթ րէիսի Սայիտ բաշա էսիթը ֆիրաշ (անկող. ծառայ.) օլմագտա իտէտէ, րիֆաթլու Տօք. Խօրասանճեան տիկէր պազը հէքիւլէրէ խաթիլարէ իտուպ մուլաիլէյիսի պիւր գաշ կիւնէ տէյիսի քէսպը իֆապաթ իտէճէյիսի գալար վերմիշ օլտըղարընը հէման Սուլթանա պիւլտիթիլէր, Զիւրա բէք մէրազ իտիյօթմըշ, վէ սըք սըք Արիֆ վէ Պէքիւր նամ մապէյիսիսիլէրէ անըն նէ հալտէ պուլընտըղընը սօրարմըշ:

— Սուլթան Պուլկար Էֆէսքըն, ախիւրէն ճիւլէ Պուլկար մէտրօպօլիտիլէրինէ՝ քէնքի էհալիլէրինին Սուլթանա սատըգ գալմալարը իշիւն թէնպիս իթմէրէի հոգաբնտա եօլլամըշ օլտըղը թահ. րիւթման բէքմէմուս գալմըշ օլտըղընը, խրիսթիան միլլէթիլէրին րուհանի րէիսիլէրի էօնիւտէ սէյիլէրիւլ թէնքիւրաթընը պէյան իթմիշ:

— Սուլթանըն իրատէսիլէ, Ճէ. նօվանըն Անսալտօ նամ ֆապիլ-գասընտա, 500 թօնէլաթօ իս. թիւպիտէ 2 առէտ թօրբիտօ եաբըլմագտա ըմըշ: Պէսպէլի պուլարը, Պահրը Ահմէր տէնիզ գուրսանլարընը թապիպ իթմէք իշիւն եաբըլմագտա տըր: Զիւրա մէղքիւր գուրսանլարը տէրտէսթ իթմէք իշիւն կիտէն 4 վաբօրտան 3ի տահա եօլտա իքէն գէտէլէն միշ օլուպ կէրի տէօնմէյէ մէճ. պուր օլտըղարընտան Պապը Ալի պահրիլէ նազըրընը պուլ պուպտէ նազարը տըգգաթընը թալէպ իթմիշ տիւր:

ՏՈՒՆԻՆԻՅԷ

Հարպիլէ նազըրը Մ. Բաբրի. բօյ, 80 Մակէթօնիլը զապիթ. լէր թարաֆընտան քէնտիսիլէ թագաթիմ օլընան իսթիֆալարընը պէօլլէ նաֆէհան վէ քիւլիլիլէթի իսթիֆալարըն միւլմընսիլ վէ մուլ պիւր օլաճաղընտան գապուլ իթմիշ տիւր:

ՄԱՐԷԹՈՆԻԱ

Եսենան հիւքիւմէթի, Մաբէթօնիտա իթիւրք ասթըրլէրին վահշէթիլէ գաբըշ պիւր միւտտէթ մուգալէմէթ իտուպ շէճիանէ (քաշարս) վաբըշտըղտան սօնրա աճիկ գալարագ 18 քիշի իլէ րուլ սիւօրընա իլթիճա իթմիշ օլան քօմանտան Եանքօվը րիւֆէգասըլա (ընկերներ) պէրապէր թէվգըֆ իթմիշ օլտըղընը իթիւրք կազէթալարը եաղմագտա տըրլար:

ՄԻԻԹԷՆԷՎՎԻՅԷ

Բարիզտէն, իթալիա կազէթալարընա պիւլտիլիտիլինէ կէօրէ, Եէհուտիլէրին իթիլիտա մէճիլիսի րէյիսի, իթալիա խարիճիլէ նա. զըրը Մ. Բրիւնէթիլէ պիւր թահ. րիւթ իթմէթիլէ րուլմանիա հիւքիւմէթիլէ արալարը բէք էյի օլտըղընտան, հիւքիւմէթիլէ օրա. տա պուլընան եէհուտիլէրի թաղ. եիք իթմէմէսի իշիւն թէվէսսիլթ իթմէսիլին րէճա իթմիշ:

— Բօրթուկալ գրալը Տօմ Գ. օր. լօս ինկիլթէրայա եէթիլուպ Գրալ Էտուարտ հալրէթիլէրի վէ րէֆագաթընտա օլան Տահմադա գրալը իլէ պիւլիթտէ ալա չըքըշլար: Պուլայըն նիհայէթիլէ Բարիզ թարիքիլէ Բօրթուկալա ալտէթ իտէճէք, Լիզպօնտա տէպրան ի. տէն շալիաթէ նազարէն, իլը պահարտա գրալ Էտուարտ տախի իտէթի վիլիթա իտէճէյիսիտէն, Պէհէլմ սէրայընը թամիր վէ թէք. եին իթմէքտէ իմիշլէր:

— Մարօգ սուլարընտա ինկի. լիզ զըրհըլարը կէօրիւնտիլիտէն ինկիլթէրանըն Մարօգ հոգաբն. տա կիլիլ բալնարը օլմասընտան գօրգարագ, Թուլօնտան Ֆրանսըզ զըրհըլարը տախի օլթարաֆա կիթմիշլէր տիւր:

— Լօրտ Սալպրի Ապրիլ նի. հայէթիլէ գատար Ֆրանսանըն Պօյիէօ շէհրինտէ գալաճագ իքէն ուսուլը մէարիֆ մէսէլէսի լօրտ մէճիլիտէ միւլապահալէ քօնմըշ օլտըղընտան, քէնտիսիլին հաղըր պուլընմասը իշիւն, րուհանի թա. րաֆտարարը միւլթաճէլ (շտապող) պիւր տալէթմամէ եօլլատըղարըն. տան պուլ կիւն անըն Լօնտօնա միւլապալէթիլէ ինթիլար (պալսսի) իթմէքտէ տիւրլէր:

— Աստրիա գրալը Ֆրանց Էօ. զէֆ հաղրէթիլէրի պիւր միւտտէթ. տէն պէրու հասթա իքէն, շիմտի իտտէի սըհէթ իթմիշ օլմասը եաղըլմագտա տըր:

— Ամբրիգանըն Եիւ-Էօրը շէհ. րինտէ, պիւր էշքիա կիւրուհի Տէ. վիսթօլթ շրմէնտըֆէր գաթարը իւզէրինէ հիւճուլ իտուպ, միւլա. սէլէ սանտըղընտա պուլընան 70,000 տօլարը զապա իտուպ ֆիրար իթմիշլէր:

ՏՕԲ. ՆԻՔՕԼԻՆԱ Մ. Է. ՔՕԼԱԶԷՎԱ

Շէհրիլիտէ պուլ նամ իլէ միւսէմա պիւր մահր թապիպէ մէվէնու օլուպ, կէրէք խարիճի վէ կէրէք տախիլ խասթարգալարընա պաղմագտա տըր: Հէր կիւն, տէօրիւնէի ուչաթտա, ուլիցա Վօլօնիտէ քեաին 13 նօմէ. րօլը խանէսիտէ հասթա գապուլ ի. իտիյօր:



Ի Լ Ա Ն

Եսենանըն եէնի վաբօր գուլմանա. սընըն վաբօրարը հէր բազար էրթէսի կիւնլէրի լիմանմըզա միւլապէլէթ ի. տուպ, սալը կիւնի պուրատան հարէ. քէթ իտիյօր: Սթանպուլ, Զանադ-Դալէյէ, Բիրէյա, Բադրասա վէ Բօրֆուլա օղրայարագ՝ Այ-Սարանտայա գատար կիտէյօր: Եօլմըլար Բիրէյատա՝ Ալէքսանտրիա, Մարսիլիա վէ Ամե. րիկա իշիւն ազթարմա օլապիլիլէր:

Վաբօրարընըն պէօյիլէրիլէ, թէ. միլիլիլ վէ շարուգըղը վէ Էօլմըլա. րըն րահաթըղը իշիւն կէօսթէրիլէն նէգաքէթ ճիւլլէյէ մալիւմ օլուպ թագաթի օլընմագտա տըր: շիմտի ֆի. յաթլարըն էնվէյիլիլէտէ սայ վէ զալրէթ իթմիլիլիլէ կիպի շէհատէթը մէօթէպէրէ իլէ կէլէն ֆուգարալարա մուլէնէթ իտէճէկիլիլի վատ վէ ի. ան իտէրիլ:

Բաղպէթի միւլթէրիլէրիլիլ տախի ֆըրսանթտան իսթիֆատէ իտէրէք, պիւրինէ ուչաթթագտա, իսկէլէտէ Մանլէսթըր սօգաղընտա 396 նօմէրօլը եաղըլմանէմիլլէ թէյրիֆ պուլլու. րա. ճաղարընը իւլթա իտէրիլ:

Մէղքիւր վաբօր գուլմանեանըն ա. ճէնթի Զ. ԼՈՒԼՈՒՏՕՐՈՒԼՕ

ՁՐԻ ԾԱՆՈՒՅՈՒՄ ԶԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻՐ

Պաշտօնական ազդերու տղը (25 սառ) 10 սանդիլ:
Անհատական ազդերու տղը (25 սառ) 20 սանդիլ:
Երեկ անգալմէն աւելիի հաւսար 20 0/0 գողջ:
Փոխարեկը դրամ կամ անսակա. դրոշմ դրկը կանխիկ:

ՍՐԱՀ "ՍԱՆԴՐԱԼ"

Այս գիշեր Նասիճա խմբին կողմանէ պիտի ներկայացուի «Ձեռնաձուլ կամ ճոխակեաց հայրը» թատերգութիւն 5 արար, իսկ մէկը յառաջան է: Դիմադաշարժ գաւելտ 1 արար:

Վաղը գիշեր պիտի ներկայացուի «Փառսթ» ռաբերգութիւնը 4 արար: Ժիմադաշարժ գաւելտ մը: «Սովորական գին»

Փորձի գրուած է ՀԱՅԵՐԵՆ ԼԵՂԱԼԱՆ «Վասպուրականի Հերոսներ», որ մօտ օրէն պիտի ներկայացուի:

Одговорникъ Н. Драгулевъ
Печ. на Хр. Н. Войниковъ—Варна